Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի դիտարկումներն ու առաջարկությունները «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

2021 թվականի մարտի 24-ից ուժի մեջ է մտել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքը: Այն նախատեսում է Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծում, որի հիմնական գործառույթը կոռուպցիոն բնույթի հանցագործություններով նախնական քննության իրականացումն է: Կոմիտեն ձևավորվելու է մրցութային կարգով:

Ի կատարումն նշված օրենքի Կառավարությունը սահմանում է Կոմիտեի նախագահի հաստիքի համար անցկացվող մրցույթում թեկնածուների կողմից ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Այս նպատակով 2021 թվականի ապրիլի 29-ին e-draft.am էլեկտրոնային հարթակում հրապարակվել է Կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

Ստորև ներկայացվում են նախագծի վերաբերյալ Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի դիտարկումներն ու առաջարկությունները:

1. Նախագծով հավակնորդի մասնագիտական փորձառությունն ու հմտությունները գնահատելու հիմնական միջոցը՝ ինքնակենսագրական է, որի համար սահմանված չէ միասնական ձևանմուշ: Առաջարկում ենք պահանջվող փաստաթղթերի ցանկում ավելացնել նաև հավակնորդի կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իր կողմից իրավաբանի կոչում ձեռք բերելուց հետո իրականացված մասնագիտական իրավաբանական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան ապացույցներ (այդ թվում՝ պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են մասնագիտական իրավաբանական ստաժ դիտարկվող աշխատանքում աշխատանքային պարտականությունները): Սա թույլ կտա առավել համապարփակ պատկերացում ունենալ թեկնածուի մասնագիտական որակների և

պիտանելիության մասին, ինչպեսև՝ կապահովվի թեկնածուի մասնագիտական գործունեության ոչ միայն ձևական, այլև բովանդակային ուսումնասիրությունը:

2. Առաջարկում ենք ապահովել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի որոշակիություն: Մասնավորապես, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում միանշանակ հասկանալի չէ, թե արդյո՞ք թեկնածուն պետք է տիրապետի թվարկված երեք լեզուներին միաժամանակ, թե դրանցից առնվազն մեկին: Հետևապես, առաջարկում ենք այդ կասկածները փարատել այս նախագծում և տալ հստակ կարգավորում: Բացի այդ, հասկանալի չէ, եթե թեկնածուն պետք է տիրապետի երեք լեզուներին միաժամանակ, ապա ինչո՞ւ է միայն առնվազն մեկի մասով անհրաժեշտ ստանդարտացված թեստային համակարգով կամ Կառավարության սահմանած այլ կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացություն: Ինչպե՞ս է ստուգվելու մյուս երկու լեզուների իմացությունը, իսկ, չստուգելու պարագայում, օրենքի այս կարգավորումը արդյո՞ք չի ստանում ձևական բնույթ:

3. Նախագծով առկա է փաստաթուղթ ներկայացնելու պահանջ, որով կհավաստվի, որ թեկնածուն լինելով դատավոր, նախկին դատավոր, դատախազ, նախկին դատախազ, քննիչ, նախկին քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր, նախկին հետաքննիչ, նախկին օպերլիազոր, փաստաբան կամ նախկին փաստաբան, վերջին երեք տարվա ընթացքում չի ստացել խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից: Անհասկանալի է, թե այդ փաստաթուղթը ով պետք է տրամադրի. անձը՝ գրավոր հայտարարության եղանակով, թե՞ կոնկրետ կառույցներ, օրինակ՝ դատավորի դեպքում՝ ՀՀ դատական դեպարտամենտը, փաստաբանի դեպքում՝ ՀՀ փաստաբանների պալատը, և այլն: Առաջարկում ենք սահմանել, որ նման փաստաթուղթը պետք է տրվի իրավասու մարմնի կողմից: